



CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITOR

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ **2024** ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ **18**-Ի՝ «ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՊԱՀՄԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ ԲԴԽ-**25**-Ն-**10** ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

*** ԶԵԿՈՒՅՑԸ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ
ԱՐՏԱՔԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2024

ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի՝ «ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՂՁԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ ԲԴԽ-25-Ն-10 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(1) «Առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշումը:

(1.1) Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշումը:

(1.2) Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշմամբ հետապնդվող նպատակը:

(1.3) Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշմամբ արտահայտված Խորհրդի կամքը:

(1.4) Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշմամբ սահմանված՝ մշտադիտարկման իրականացման գործընթացը:

(1.4.1) Դատարանի նախագահի լիազորությունը մշտադիտարկման իրականացման գործընթացում:

(2) Գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստի առթիվ դատարանի նախագահի կողմից կատարվող գործողությունները:

(2.1) Օրինականության սկզբունքը:

(2.2) Դատարանի նախագահի լիազորությունները:

(2.3) Դատարանների նախագահների լիազորությունների բնույթը:

(2.4) Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշմամբ սահմանված դատարանի նախագահի լիազորությունների կատարման իրավական (լիազորող) հիմքը:

(2.4.1) Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշմամբ Խորհրդի կողմից իր իսկ լիազորությունների անցումը:

(2.5) Միջանկյալ եզրահանգում:

(3) Գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստի որակումը որպես դատարանի նախագահի՝ որոշմամբ նախատեսված պարտականություն:

(3.1) Խորհրդի որոշմամբ օգտագործված ձևակերպումները:

(3.1.2) Խորհրդի որոշմամբ օգտագործված ձևակերպումների անթույլատրելիությունը:

(3.2) Գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստի որակման համար նախատեսված չափորոշիչները:

(3.2.1) Գործի իրավական և փաստական բարդության չափորոշիչը:

(3.2.2) Գործի իրավական և փաստական բարդության չափորոշիչի մասին դիտարկում:

(3.3.1) Գործով դատավարության մասնակիցների վարքագծի չափորոշիչը:

(3.3.2) Գործով դատավարության մասնակիցների վարքագծի չափորոշիչի մասին դիտարկում:

(3.4.1) Գործով դատարանի գործողությունների անբավարար լինելը, ինչպես նաև գործով իրավասու այլ մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների անբավարար լինելու չափորոշիչները:

(3.4.2) Գործով դատարանի գործողությունների անբավարար լինելը, ինչպես նաև գործով իրավասու այլ մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների անբավարար լինելու չափորոշիչների մասին դիտարկում:

(4) Թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշմամբ սահմանված գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները:

(4.1) Թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշմամբ սահմանված՝ քրեական գործերով իրավական բարդության չափանիշի գործակիցները:

(4.1.2) Միջանկյալ եզրահանգում:

(5) Ամփոփում:

(1) «Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշումը:

(1.1) *Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշումը:* Դատարանների և դատավորների անկախության երաշխավոր Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) 2024 թվականի մարտի 18-ին կայացրել է թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշումը՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու կարգը՝ համաձայն նույն որոշման հավելվածի սահմանելու մասին (այսուհետ՝ նաև Որոշում):

(1.2) *Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշմամբ հետապնդվող նպատակը:* Խորհրդի կողմից առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու գործընթացի վերաբերյալ որոշման կայացումը, ըստ որոշման հավելվածի 2-րդ կետի, նպատակ է հետապնդում ապահովելու առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործերի ողջամիտ ժամկետում քննությունը և լուծումը, գործերի քննության տևողության կանխատեսելիությունը՝ հիմք ընդունելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և 13-րդ հոդվածով ամրագրված դրույթներով սահմանված պահանջների վերաբերյալ միջազգային և ներպետական կառույցների կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները:

(1.3) *Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշմամբ արտահայտված Խորհրդի կամքը:* Առաջին հայացքից կարելի է պնդել, որ Խորհուրդը, ելնելով առավելապես արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող գործերի քննության ողջամիտ ժամկետի ապահովման գերակայությունից, ցանկացել է որևէ մեխանիզմի գործադրմամբ բացառել դատարանում գործերի քննության անհարկի և կամայական ձգձգումները՝ մի կողմից, այդպիսով իսկ ապահովել դատավարության մասնակիցների սահմանանադրական և կոնվենցիոնալ իրավունքների իրացման արդյունավետությունը՝ մյուս կողմից:

Ստացվում է, որ Որոշմամբ հետապնդվող նպատակը արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովումն է, ինչը մի կողմից հնարավորություն կտա դատավարության մասնակիցներին սեղմ ժամկետներում կենսագործել արդարադատություն հայցելու իրավունքը՝ մի կողմից, և հնարավորինս նվազագույնի կհասցնի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից այս հիմքով ընդդեմ Հայաստանի կայացվող վճիռների/որոշումների թիվը՝ մյուս կողմից:

(1.4) Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշմամբ սահմանված՝ մշտադիտարկման իրականացման գործընթացը: Որոշմամբ դատարանների նախագահների համար նախատեսվել է պարտականություն¹ յուրաքանչյուր տարվա կիսամյակի ավարտից հետո, սակայն ոչ ուշ, քան ընթացիկ տարվա համար օգոստոսի 30-ը, իսկ տարեկան արդյունքների դեպքում՝ ոչ ուշ, քան հաջորդ տարվա փետրվարի 28-ը, դատավորների պարզաբանումների հիման վրա կազմել ամփոփ զեկույց և ուղարկել Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմին:

Հատկանշական է, որ դատավորների կողմից յուրաքանչյուր գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստը որակվում է դատարանի նախագահի կողմից այնպիսի չափորոշիչների հաշվառմամբ, ինչպիսիք են գործի իրավական և փաստական բարդությունը, գործով դատավարության մասնակիցների վարքագիծը, գործով դատարանի գործողությունների անբավարար լինելը, ինչպես նաև գործով իրավասու այլ մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների անբավարար լինելը:

(1.4.1) Դատարանի նախագահի լիազորությունը մշտադիտարկման իրականացման գործընթացում: Դատավորի վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելու, ինչպես նաև Որոշմամբ նախատեսված կանոնները չպահպանելու դեպքում դատարանի նախագահը դիմում է Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, և դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող Լիազոր մարմնին, որի մասին տեղեկատվությունն ուղարկում է Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմին:

¹ Տե՛ս Որոշման 11-րդ և 19-րդ կետեր:

(2) Գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստի առթիվ դատարանի նախագահի կողմից կատարվող գործողությունները:

(2.1) Օրինականության սկզբունքը: Մահմանադրության 6-րդ հոդվածն ամրագրում է օրինականության սկզբունքը, որն իրենից ենթադրում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց (այդ թվում՝ Բարձրագույն դատական խորհուրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ), դատարանի նախագահի, դատավորների և այլն) կողմից միայն այնպիսի գործողությունների կատարում, որոնց համար վերջիններս լիազորված կլինեն Մահմանադրությամբ կամ օրենքներով:

«Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի համատեքստում՝ օրենքի իրականացումն ապահովելու նպատակով Խորհրդի կողմից կարող են ընդունվել ենթաօրենսդրական ակտեր, սակայն դրանք չեն կարող փոփոխել կամ լրացնել դատավորի և դատարանի նախագահի լիազորությունների ծավալները, ինչից այդ թվում նաև հետևում է, որ ցանկացած հասկացություն, որն օգտագործում է «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը, և որի բովանդակությունից է նաև կախված դատավորի և դատարանի նախագահի լիազորությունների ծավալը, պետք է ամրագրվի բացառապես օրենքով:

Օրենքը դիտարկելով որպես պարտականության սահմանման իրավական ձև՝ սահմանադիրը կանխորոշել է սահմանափակումների հիմքերը և ծավալը, ինչպես նաև դրա բավարար չափով որոշակի լինելը:

(2.2) Դատարանի նախագահի լիազորությունները: «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահի լիազորությունները, այն է՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահին

- 1) ապահովում է դատարանի բնականոն գործունեությունը, ներառյալ՝ վերահսկում են դատարանի աշխատակազմի գործունեությունը,
- 2) դատավորներին տրամադրում է արձակուրդ,
- 3) ներկայացնում է դատարանն այլ մարմինների հետ հարաբերություններում,

4) դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դիմում է Բարձրագույն դատական խորհուրդ, Ընդհանուր ժողով և Ընդհանուր ժողովի հանձնաժողովներ,

5) դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդում է ներկայացնում Ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին (այսուհետ՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով),

5.1) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով իրականացնում է մշտադիտարկում դատարանում գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ,

6) իրականացնում է այլ լիազորություններ:

(2.4) Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշմամբ սահմանված դատարանի նախագահի լիազորությունների կատարման իրավական (լիազորող) հիմքը: Ինչպես արդեն նշվեց, դատավորի կողմից դատավորի վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելու, ինչպես նաև Որոշմամբ նախատեսված կանոնները չպահպանելու դեպքում դատարանի նախագահը պարտավորվում է դիմել Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին և դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող Լիազոր մարմնին, որի մասին տեղեկատվությունն ուղարկում է Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմին:

Հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը սահմանում է դատարանի նախագահի՝ դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս բացառապես Ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովին այդ մասին համապատասխան հաղորդում ներկայացնելու լիազորություն, մինչդեռ Խորհրդի Որոշմամբ նախատեսել է դատարանի նախագահի՝ դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս նաև դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող Լիազոր մարմնին դիմելու լիազորություն:

(2.4.1) Թիվ ԲԴԽ-25-Ն-10 որոշմամբ Խորհրդի կողմից իր իսկ լիազորությունների անցումը: Փաստացի Խորհուրդը, անտեսելեով

Սահմանադրությամբ հռչակված օրինականության սկզբունքի պահանջները, դատարանի նախագահի համար ենթաօրենսդրական ակտով՝ Որոշմամբ նախատեսել է նոր լիազորություն, այն է՝ դատարանի նախագահը դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս կարող է դիմել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող Լիազոր մարմնին: Մինչդեռ, ի ապահովումն օրինականության սկզբունքի՝ Սահմանադրության 164-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:

Որոշման 12-րդ կետի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ Խորհուրդը փորձ է արել քննարկման առարկա լիազորությունը կապել «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հետ, որը սահմանում է դատարանի նախագահի կողմից այլ լիազորություններ իրականացնելու մասին դրույթ: Սակայն հարկ է փաստել, որ դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդումը կոնկրետ մարմնին ներկայացնելու պահանջի առկայության դեպքում (խոսքը Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով մասին է) «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող Լիազոր մարմնին դիմելու իրավասություն:

Հակառակ մոտեցման պարագայում, օրինակ՝ «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, ինչքան էլ որ նախատեսում է դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով կոնկրետ մարմիններին, այն է՝ Բարձրագույն դատական խորհուրդին, Ընդհանուր ժողովին և Ընդհանուր ժողովի հանձնաժողովներին դիմելու դատարանի նախագահի իրավասություն, չի կաշկանդի «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը մեկնաբանել այնպես, որ դատարանի նախագահը դատարանի բնականոն գործունեության

ապահովման հետ կապված հարցերով իրավասու լինի դիմելու օրինակ՝ Կառավարություն կամ Ազգային ժողով:

(2.5) Միջանկյալ եզրահանգում: Խորհուրդը որոշել է դատարանի նախագահի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող Լիազոր մարմնին դիմելու միջոցով կարգապահական վարույթ հարուցելու, ըստ այդմ էլ՝ իբրև կարգազանց դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգ, մինչդեռ Սահմանադրության 164-րդ հոդվածի ուժով նման կարգն անթույլատրելի է, քանի որ «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի շրջանակներում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նման ընթացակարգ նախատեսված չէ:

Խորհուրդը կոնկրետ գործողության ոլորտում դատարանի նախագահի՝ «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով հստակ նախատեսված լիազորությունների շրջանակներն իր կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտով արհեստականորեն ընդլայնելու փորձ է կատարել՝ այդպիսով և պարտավորեցնելով դատարանների նախագահներին իրենց գործունեության ընթացքում անտեսել Սահմանադրությամբ երաշխավորված օրինականության սկզբունքը:

(3) Գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստի որակումը, որպես դատարանի նախագահի՝ որոշմամբ նախատեսված պարտականություն:

(3.1) Խորհրդի որոշմամբ օգտագործված ձևակերպումները: Խորհուրդի որոշման 11-րդ կետով սահմանվում է «11. Դատարանի նախագահը դատավորների (այդ թվում՝ Դատարանի նախագահի) կողմից ներկայացված պարզաբանումների հիման վրա կազմում է ամփոփ զեկույց (այսուհետ՝ Զեկույց), որում յուրաքանչյուր գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստը որակվում է հետևյալ չափորոշիչների հաշվառմամբ. (...)»

Ստացվում է, որ յուրաքանչյուր գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստի հաստատումը (որակումը) վերապահված է դատարանի նախագահին: Ուշագրավ է Խորհրդի այն մոտեցումը, որ յուրաքանչյուր գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստը դատարանի նախագահը պետք է հաստատի նաև իր վարույթում գտնվող գործերի վերաբերությամբ: Ընդ որում՝ միայն նման հաստատված

փաստի առկայության դեպքում է հնարավոր դիմել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններին:

(3.1.2) Խորհրդի որոշմամբ օգտագործված ձևակերպումների անթույլատրելիությունը: Յուրաքանչյուր գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստի հաստատումը, այդ կերպ՝ դատավարության մասնակցի սահմանադրական հիմնարար և կոնվենցիոնալ իրավունքի խախտման փաստի արձանագրումը վերապահված է բացառապես Բարձր դատարաններին (*օրինակ՝ Մահմանադրական դատարանին, Վճռաբեկ դատարանին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանին, կամ Խորհրդին, երբ վերջինս հանդես կգա որպես դատարան*) և ոչ երբեք դատարանի կազմակերպչական հարցերով զբաղվող, դատարանի նախագահին. չէ որ դատարանի նախագահը գործի քննության ողջամիտ ժամկետի հատման հարցի կապակցությամբ որոշում կայացնելիս հանդես չի գալիս որպես փաստ գնահատող դատարան²:

Նման ձևակերպումների առկայության պայմաններում ստեղծվելու է իրավիճակ, երբ վարույթին դատավարության սուբյեկտի կարգավիճակ չունեցողը՝ դատարանի նախագահը, վարույթից դուրս գնահատելու է վարույթին առչվող մի շարք դատավարական հարցերի լուծման/դրա բացակայության իրավաչափությունը վարույթն իրականցող մարմնի (դատարանի) կողմից, այսինքն՝ գործառույթ, որն իր բնույթով ոչ թե կազմակերպաիրավական է, այլ վարութային և ենթակա է լուծման ոչ թե կազմակերպաիրավական կառուցակարգերի շրջանակներում, այլ վարութային՝ վերադաս ատյանների կողմից՝ ստորադաս դատարանների գործողությունների իրավաչափության գնահատման շրջանակներում:

Որոշմամբ ամրագրված կարգավորման համատեքստում, սակայն, հավանական է դառնում նաև այն, որ Խորհրդի որոշմամբ նախատեսված

² Այս համատեքստում պետք է արձանագրել, որ չնայած ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման փաստը կարող են հաստատել միայն Բարձր դատարանները, սակայն մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ թիվ ԵԴ/31501/02/19 գործով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արձանագրել է մեկ այլ՝ ՎԴ6/0080/05/16 գործով ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտում: Իսկ մեկ այլ թիվ ԿԴ/0132/01/20 գործով Վերաքննիչ դատարանը թեև չի արձանագրել ստորադաս դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտում, այնուամենայնիվ այն քննարկման առարկա է դարձրել:

ընթացակարգը դատարանների նախագահների կողմից կարող է օգտագործվել որպես լծակ՝ նույն դատարանում պաշտոնավարող այլ դատավորների նկատմամբ ներքին ճնշումներ գործադրելու համար:

(3.2) Գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստի որակման համար նախատեսված չափորոշիչները: Խորհրդի որոշման 11-րդ կետը նախատեսում է գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստը որակելու հետևյալ չափորոշիչները՝ գործի իրավական և փաստական բարդությունը, գործով դատավարության մասնակիցների վարքագիծը, գործով դատարանի գործողությունների անբավարար լինելը, ինչպես նաև գործով իրավասու այլ մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների անբավարար լինելը:

(3.2.1) Գործի իրավական և փաստական բարդության չափորոշիչը: Խորհրդի որոշմամբ նախատեսվել է գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստը հաստատելու՝ գործի իրավական և փաստական բարդության չափորոշիչը: Գտնում ենք, որ յուրաքանչյուր գործի իրավական և փաստական բարդության վերաբերյալ պատկերացում կարելի է կազմել բացառապես տվյալ գործի նյութերին և տվյալ գործով դատավարության ընթացքին ամբողջությամբ ծանոթանալու դեպքում:

(3.2.2) Գործի իրավական և փաստական բարդության չափորոշիչի մասին դիտարկում: Կիսամյակային արդյունքների վերաբերյալ զեկույցը դատարանի նախագահի կողմից ոչ ուշ, քան ընթացիկ տարվա օգոստոսի 30-ը ներկայացնելու Խորհրդի դիրքորոշումն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ նախատեսվելով նման սեղմ ժամկետներ, գործի իրավական և փաստական բարդության չափորոշիչը դատարանի նախագահի կողմից չի կարող գնահատվել գործի նյութերին և տվյալ գործով դատավարության ընթացքին ամբողջությամբ ծանոթանալուց հետո: Իսկ թե ինչպիսի այլ եղանակով դատարանի նախագահը կարող է գնահատել գործի իրավական և փաստական բարդությունը և հանգել օբյեկտիվ հետևության, որպեսզի Խորհրդի կողմից նախատեսված սեղմ ժամկետներում զեկույցը կազմվի, մնում է անհայտ:

(3.3.1) Գործով դատավարության մասնակիցների վարքագծի չափորոշիչը: Թեպետև գործի նյութերին և տվյալ գործով դատավարության ընթացքին ամբողջությամբ ծանոթանալը հնարավորություն կտար պատկերացում կազմել

դատավարության մասնակիցների վարքագծի մասին, սակայն նման հնարավորությունն, ինչպես վերը արձանագրվեց, բացակայում է. ֆիզիկապես հնարավոր չէ նման սեղմ ժամկետում ամբողջությամբ և լիարժեք ծանոթանալ նստավայրում պաշտոնավարող դատավորների բոլոր գործերին³:

(3.3.2) Գործով դատավարության մասնակիցների վարքագծի չափորոշիչի մասին դիտարկում: Նման հնարավորության բացակայության պայմաններում դատավարության մասնակիցների վարքագծի վերաբերյալ պատկերացում կազմելու հնարավորությունը կարող է դիտարկվել վերջիններիս կողմից դատարանին հասցեագրված՝ նշանակված դատական նիստերը հետաձգելու մասին գրությունների քանակով, ինչը, բնականաբար, ամբողջությամբ չի կարող բացահայտել դատավարության մասնակիցների վարքագիծը տվյալ գործով: Կենտրոնի գնահատմամբ, նման հարցրեի գնահատումը ոչ թե ոչ վարույթի սուբյեկտ դատարանի նախագահի իրավասությունն է, այլ՝ վարույթի սուբյեկտ դատարանի: Այդ համատեքստում, դատարանի հնարավոր անգործությունը նույնպես, դատավարական հարց լինելով, կարող է գնահատվել միայն դատավարական կարգով՝ դատական վերանայմամբ, կարգապահական վարույթի շրջանակներում, բայց ոչ մոնիթորինգի արդյունքում դատարանի նախագահի կողմից կազմվող տեղեկանքներում:

Ավելորդ է խոսել դատավարության մասնակիցների վարքագծի վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով «Ֆեմիդա» ձայնագրառման համակարգի ձայնագրությունների ուսումնասիրություն կատարելու մասին:

(3.4.1) Գործով դատարանի գործողությունների անբավարար լինելը, ինչպես նաև գործով իրավասու այլ մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների անբավարար լինելու չափորոշիչները: Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է դատարանի կողմից միայն

³ Կենտրոնը գտնում է, որ դատարանի նախագահի կողմից դատարանում պաշտոնավարող դատավորների կողմից քննվող գործերին ամբողջությամբ ծանոթանալու պայմաններում դատարանի նախագահը չպետք է ծանրաբեռնված լինի իր որպես դատավորի կարգավիճակից բխող գործառնություններով (գործերի քննությամբ, փաստաթղթաշրջանառության ապահովմամբ, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվությունների հարցի լուծմամբ և այլն): Նույնիսկ նման ծանրաբեռնվածության բացակայության պայմաններում ժամանակակից առումով դժվար է պատկերացնել, թե ինչպե՞ս կարող է դատարանի նախագահը ծանոթանալ դատարանում պաշտոնավարող դատավորների բոլոր գործերին:

Սահմանադրությանը և օրենքերին համապատասխան գործելու պահանջ: Օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 333-րդ հոդվածը նախատեսում է դատարանի նախաձեռնությամբ այլ ապացուցողական գործողությունները կատարելը:

Դատարանի նախաձեռնությունը դրսևորվում է գործի նյութերի համակողմանի ուսումնասիրության և դրանցից բխող անհրաժեշտության հիման վրա: Այս համատեքստում, նման չափորոշիչի նախատեսման պարագայում հնարավոր են դեպքեր, երբ դատարանի նախագահի կողմից դատարանի նախաձեռնության բացակայությունը (օրինակ՝ հարցաքննության կանչված վկայի չներկայանալու դեպքում վերջինիս նկատմամբ դատավարական սանկցիա չկիրառելը (վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար չներկայացնելը)) դիտվի որպես անբավարար գործողություն և դրվի գործի քննության ողջամիտ ժամկետի հատման փաստը հիմնավորելու հիմքում: Նման իրավիճակներ հնարավոր են նաև գործով իրավասու այլ մարմինների և պաշտոնատար անձանց դեպքում:

(3.4.2) Գործով դատարանի գործողությունների անբավարար լինելը, ինչպես նաև գործով իրավասու այլ մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների անբավարար լինելու չափորոշիչների մասին դիտարկում: Եթե դատարանի նախաձեռնության բացակայությունը դիտվի որպես անբավարար գործողություն, ապա այն ուղղակիորեն կհանգեցնի դատարանի անկախության խախտելությանը. դատարանները, հնարավոր կարգապահական վարույթներից խուսափելու համար, կսկսեն առաջնորդվել ոչ թե գործի նյութերի համակողմանի ուսումնասիրության և դրանցից բխող անհրաժեշտությամբ ծագած նախաձեռնության, այլ դատարանի նախագահի կողմից նախկինում հրապարակված զեկույցների ուսումնասիրությունից բխող՝ դատարանի նախագահի համար ընդունելի գործողություններ կատարելու տրամաբանության վրա, ինչն իրավական պետությունում անթույլատրելի է, իսկ Խորհրդի որոշման առկայության դեպքում՝ անխուսափելի:

(4) Թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշմամբ սահմանված գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները: 2021 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշմամբ Խորհուրդը, ըստ գործերի առանձին տեսակների և բարդության, սահմանել է դրանց քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ, որոնք

հանգում են հետևյալին՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում դատական քննության ուղենիշային ժամկետն 9 ամիս է, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ 3 ամիս, ՀՀ վճառբեկ դատարանում՝ 15 ամիս, իսկ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարաններում⁴ դատական քննության ուղենիշային ժամկետները ներկայացված են թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշման I գլխում, որոնց հնարավոր շեղումը չի կարող գերազանցել յուրաքանչյուր դատավորի վարույթում քննված և ավարտված գործերի ընդհանուր քանակ տասը տոկոսը:

Նույն որոշման 8-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետների հաշվարկի սկիզբ է համարվում դատարանի կողմից հայցադիմումը/դիմումը, քրեական գործը, վերաքննիչ և վճառբեկ բողոքը վարույթ ընդունելու պահը:

(4.1) Թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշմամբ սահմանված՝ քրեական գործերով իրավական բարդության չափանիշի գործակիցները: Խորհուրդը քննարկվող որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված հանցանքները տարանջատել է 4 խմբի և որպես իրավական բարդության չափանիշի գործակից է սահմանել համապատասխանաբար 0.25, 0.50, 0.75 և 1.0 գործակիցները: Միննույն ժամանակ, հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ Խորհուրդը, բացի իրավական բարդության չափանիշների գործակիցներ սահմանելուց, այնուամենայնիվ, անկախ սահմանված գործակիցից, սահմանել է նաև գործերի քննության առավելագույն ժամկետներ: Օրինակ՝ քրեական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության բարդ մակարդակ ունեցող դատական գործերի 70 տոկոսը ենթակա է քննության 9 ամսվա ընթացքում, 90 տոկոսը՝ 10, իսկ 100 տոկոսը՝ 12 ամսվա ընթացքում:

(4.1.2) Միջանկյալ եզրահանգում: Ստացվում է, որ Խորհուրդը, արհեստականորեն տարանջատելով ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված հանցանքները, սահմանել է միմյանցից էապես տարբերվող իրավական բարդության չափանիշի գործակիցներ: Տպավորություն է, թե Խորհրդի ընկալմամբ, նման արհեստական տարանջատումը կհանգեցնի տարբեր խմբերում գտնվող հանցանքների իրավական և փաստական բարդությունների համապատասխանությանը սահմանված գործակիցների չափանիշներին:

⁴ Ձևակերտման ըստ թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշման.

Այս համատեքստում հարկ է փաստել, որ չեն բացառվում դեպքերը, ավելին՝ ավելի ցածր գործակից ունեցող խմբում նախատեսված հանցանքների քննությունը կարող է ավելի բարդ լինել, քան ավելի բարձր գործակից ունեցող խմբում նախատեսված հանցանքի քննությունը. չէ որ գործի բարդությունը կախված է ոչ միայն հանցանքի ծանրության աստիճանից, այլ, օրինակ՝ մեղադրյալների քանակից, հանցավոր սխեմայից, հասցված վնասից և այլն:

Ինչ վերաբերվում է գործերի քննության առավելագույն ժամկետներին, հարկ ենք համարում շեշտադրել Խորհրդի կողմից սահմանված քննարկման առարկա ժամկետների անթույլատրելիությանը, հետևյալ պարզ պատճառաբանությամբ.

Սահմանելով քրեական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության բարդ մակարդակ ունեցող դատական գործերի 70 տոկոսը 9 ամսվա ընթացքում, 90 տոկոսը՝ 10, իսկ 100 տոկոսը՝ 12 ամսվա ընթացքում քննելու և ավարտելու վերաբերյալ ժամկետներ, Խորհուրդը, կարծես, անհաջող փորձ է արել կանխատեսելու դատավորինների աշխատանքի օգտակար գործողության գործակցի տատանումները, քանի որ դատավորի վարույթում գտնվող բարդության բարդ մակարդակ ունեցող դատական գործերի 20 տոկոսի քննարկման համար նախատեսել է 1 ամիս ժամանակ, իսկ երկու անգամ ավելի քիչ քանակությամբ գործեր՝ 10 տոկոսի քննարկման համար նախատեսել է 20 տոկոսի քննարկման համար նախատեսված ժամկետից 2 անգամ ավել ժամանակ՝ 2 ամիս:

(5) Ամփոփում: Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնը փաստում է, որ գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետների հիմքում դրված անհասկանալի տրամաբանությունը, ինչպես նաև այդ ժամկետները չպահպանելու հետևանքով առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու խնդրահարույց կարգը, կարծես թե, չեն հետապնդում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և 13-րդ հոդվածով ամրագրված դրույթներով սահմանված պահանջների վերաբերյալ միջազգային և ներպետական կառույցների կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների իրացումն ապահովելու լեզիտիմ նպատակը:

Կենտրոնի գնահատմամբ՝ թեև Որոշումը պետք է հետապնդի մարդու իրավունքների պաշտպանության նպատակ և ուղղված լինի գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի ապահովմանը, այնուամենայնիվ, Որոշմամբ սահմանված կարգավորումների համատեքստում, դրա կիրարկումը վտանգավոր է դատարանների (դատավորների) ներքին անկախության ապահովման համատեքստում:

Ավելին, այն պայմաններում, երբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է⁵ գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի խախտումից պաշտպանության լավագույն միջոցի՝ կանխարգելիչ կառուցակարգերի նախատեսումը որպես օրենսդիր մարմնի իրավասությանը ենթակա հարց՝ Բարձրագույն դատական խորհուրդը չպետք է այն իր իրավասության սահմաններում լուծելու փորձ աներ: Այլ խոսքով՝ չպետք է փորձել լուծում տալ այնպիսի հարցերին, որոնք գտնվում են իշխանության այլ ճյուղի՝ օրենսդրի իրավասության սահմաններում⁶:

⁵ Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 16-ի ՍԴՈ-1585 որոշում:

⁶ Ավելին՝ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի «Ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի խախտման դեպքում իրավունքի վերականգնման մեխանիզմների բացակայության վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցում նշվում է, «(...) դատական ակտերի բողոքարկման ընթացակարգերի, վերանայման արդյունքում վերադաս դատական ատյանների կայացրած դատական ակտերի շրջանակից հետևում է, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումը վերացնելու միջոցները չեն կարող ապահովել վերանայման կառուցակարգերի շրջանակներում»: